ՏԵՂԵԿԱՆՔ

Իրավական ակտերի նախագծերի հանրային քննարկման վերաբերյալ

Իրավական ակտի նախագծի անվանում

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2020-2022 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՄԱՐԴԿԱՆՑ ԹՐԱՖԻՔԻՆԳԻ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳԻՐԸ ԵՎ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄ ՆԱԽԱԳԻԾ

Իրավական ակտի նախագիծ մշակող մարմնի անվանում

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

Իրավական ակտի տեսակ

Որոշում

Ոլորտ

Սոցիալական ապահովություն

Հանրային քննարկման ժամկետ

21/02/2020 - 09/03/2020

Ստացված առաջարկների արդյունքներ

Ստացվել է 1 առաջարկ (կայքում առկա առաջարկներից)

Ամփոփվել է 1 առաջարկ

Քվեարկության արդյունքներ

5 կողմ

0 դեմ

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2020-2022 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՄԱՐԴԿԱՆՑ ԹՐԱՖԻՔԻՆԳԻ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳԻՐԸ ԵՎ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

h/h	Առարկության, առաջարկության հեղինակը, ստացման ամսաթիվը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունը
	1	2	3	4
1	Գրիգոր Բեջանյան 03.03.2020 16:53:46	Ուսումնասիրելով մարդկանց թրաֆիքինգի և շահագործման Հայաստանյան և արտասահմանյան փորձը և պրակտիկան տևական ժամանակ կատարելով ուսումնասիրություն ողջունելի է կառավարության որդեգրած մոտեցումը, բայց կխնդրեի ուշադրություն դարձնել նաև այս խնդիրներին և բացերին, որոնք առանձնացվել են իմ կողմից: Առաջարկություն 1-ինում ՀՀ-ում թրաֆիքինգի դեմ պայքարի ոլորտում քիչ թե շատ իրականացվում են աշխատանքներ:	Ներկայացված առաջարկությունը հաշվի կառնվի հետագա աշխատանքները կազմակերպելու ընթացքում:	

		Պետությունը, Հասարակական կազմակերպությունները, շահագրգռված անձինք կատարում են աշխատանքներ թրաֆիքինգի դեմ պայքարի շրջանակում: Հիմնականում իրազեկում են քաղաքացիներին, թե ինչպես է կատարվում թրաֆիքինգը, ինչպես են հավաքագրվում անձինք, ինչպես են թրաֆիքինգով զբաղվող անձինք շինծու և կեղծ խոստումներ տալիս մարդկանց, ինչպես պետք է զերծ մնալ թրաֆիքինգի զոհ դառնալուց, ինչպես պետք է պայքարել թրաֆիքինգի դեմ: Հիմնականում այդ շրջանակում են իրականացնում իրազեկումները, քննարկումները, հանդիպումները քաղաքացիների կամ որոշակի խմբի անձանց հետ: Սակայն ՀՀ-ն օրենսդրությունը բավականին մեծ օգնություն և իրավունքներ է տրամադրում թրաֆիքինգի հատուկ կատեգորիայի <<զոհերին>>, տրամադրվում է բնաիրային օգնություն, կացարանի տրամադրում, միանվագ դրամական փոխհատուցում, հիմնական կրթության ապահովում, աշխատանքի տրամադրում և մի շարք այլ աջակցությունները, որոնք թրաֆիքինգի զոհերին որոշակիորեն վերաինտեգրում են հասարակությանը: Սակայն		

		աջակցության մասին գրեթե չի խոսվում, և հասարակության շատ փոքր մասն է տեղյակ այդ աջակցության մասին: Առաջարկում եմ բոլոր միջոցառումների ընթացքում, որոնց ընթացքում պետք է խոսվի թրաֆիքինգից ՝առաջնային ներկայացվի պետության կողմից թրաֆիքինգի զոհերին տրամադրվող աջակցությունից: Բացի այդ, դրա մասին կարող են հասարակությանը իրազեկել ՀԼՄ-ների, քննարկումների, այցերի միջոցով դա կհանգեցնի հասարակության իրազեկմանը: Իսկ իրազեկված հասարակության մեջ մեխանիկորեն թրաֆիքինգով զբաղվող անձինք կկաշկանդվեն զբաղվել թրաֆիքինգով, մտածելով, որ հասարակությունը տեղեկացված է և համագործակցում է պետության հետ: Առաջարկություն 2. Հավանական զոհերի աջակցությունը ներառում է 7 կետ և որոշակիորեն նպաստում անձի վերաինտեգրմանը և աջակցությանը, սակայն համեմատության մեջ դնելով զոհերի և հատուկ կատեգորիայի զոհերի տրամադրվող աջակցությունը նկատում ենք, որ <<զոհերին>> տրամադրվում է երկու կետ, որը, ըստ իս, պետք է ներառված լիներ նաև հավանական զոհերի աջակցության կետում: Դրանցից		

		առաջինը դա երրորդ կետն է անհրաժեշտ փաստաթղթերի տրամադրում և վերականգնում: Պարզաբանեմ անհրաժեշտությունը, եթե թրաֆիքինգի կամ շահագործման մեջ գտնվող անձը գտնվում է նույնականացման շրջանում և ըստ գործող օրենքի 17-րդ հոդվածի ժամկետը հաշվարկվում է հավանական զոհի հայտնաբերման մասին իրավասու մարմնի կողմից տեղեկություն ստանալու պահից մինչև նրան նույնացման ներկայանցնելը և չի գերազանցում տաս օրը, նույն հոդվածի 2-րդ մասում նշվում է, որ բացառիկ դեպքերում, երբ սահմանված ժամկետում հնարավոր չի եղել ձեռք բերել հայտնաբերված անձի՝ զոհ կամ հատուկ կատեգորիայի զոհ հանդիսանալը հավաստող կամ հերքող ողջամիտ կասկածներ հարուցվող բավարար տեղեկություններ, նույնականացման ժամկետը կարող է երկարաձգվել նույնացման հանձնաժողովի որոշմամբ մեկ անգամ՝ առավելագույնը ևս 10 օրով: Այստեղից կարելի է ենթադրել, որ անձը կարող է 20 օր գտնվել նույնականացման փուլում և ըստ գործող օրենքի ՝այդ ընթացքում անձը իրավունք չունի օրինական կարգով ստանալ կամ վերականգնել անհրաժեշտ փաստաթղթերը, և դա նույնպես		

		կարող է նպաստել, որ թրաֆիքինգի զոհը մտավախություն ունենա դրա հետ կապված և չբարձրաձայնի այդ մասին: Եվ հիմնական զոհերը թրաֆիքինգի ընթացքում չեն ունենում փաստաթղթեր կամ հիմնականում կեղծ փաստաթղթեր են, և դա արդեն հիմք է հանդիսանում թրաֆիքինգի զոհի մոտ խուսափելու իր խնդիրն բարձրաձայնելու համար: Քանի որ եղել են դեպքեր, երբ անձինք դատապարտվել են ապօրինի սահմանը հատելու կամ կեղծ փաստաթղթեր օգտագործելու համար: Եվ դա, ինքնըստինքյան, խոչնդոտում է թրաֆիքինգի բացահայտմանը և նպաստում դրանցով զբաղվող անձանց վստահությանը և անպատժելիության մթնոլորտի ձևավորմանը: Հաջորդ բացը անվտանգ վերադարձի կազմակերպումն է: Իմ կարծիքով դա սխալ մոտեցում է, քանի որ, թեպետ, նույնականացման ընթացքում անձը չճանաչվի զոհ, իսկ մեղադրվող անձը կարող է դատապարտվել, օրինակ՝ մարդուն անազատության մեջ պահելու, առևանգման կամ թրաֆիքինգի հետ հաճախ շատ նուրբ սահմանազատմամբ հանցագործության մեջ: Իմ սուբյեկտիվ կարծիքն է՝չպետք է այդ		

		հանգամանքը հիմք ընդունել և անձի անվտանգ վերադարձը չկազմակերպել: Պատկերացնենք, որ անձը օտարերկրացի է և չունի բավարար միջոցներ իր սեփական անվտանգ վերադարձը կազմակերպելու համար: Այդ պարագայում անձը հարկադրաբար իր կամքից անկախ պայմաններում և օրենքի բացի պատճառով իրավունք չի ստանում վերադառնալ իր կացության վայրը կամ պետությունը, նաև օրենքի բացի պատճառով: Առաջարկություն3. Կրճատել նույնականացման փուլը 10+10 օր ձևաչափը հասցնել գոնե 5+5 քանի որ ամեն օրն թրաֆիքինգի զոհի մոտ հավելյալ ճնշում և անվստահություն առաջացնել պետության նկատմամբ: Առաջարկություն 4. ՀՀ-ում հաճախ պետությունը և ՀԿ-ը թրաֆիքինգի պայքարի ոլորտում գործում են բացառապես իրարից անկախ և չկա համագործակցություն, որը իմ կարծիքով անթույլատրելի է: ՀԿ-ը հիմնականում ֆինանսավորում են միջազգային կազմակերպություններից, չկա պետական վերահսկողություն կամ համագործակցություն և հաճախ ՀԿ-ը թրաֆիքինգի պայքարի ոլորտում ավելի մեծ փորձ ունեն, քան նույնիսկ կառավարությունը կամ պետական այլ		

		գերատեսչությունները, և ես առաջարկում եմ, որպեսզի այդ երկու մարմինները ստեղծեն որոշակի ձևաչափ, որում համատեղ կաշխատեն թրաֆիքինգի դեմ պայքարի ոլորտում: Առաջարկություն 5. ՀՀ-ն քրեական օրենսգրքով նախատեսված այն հանցանքների դեպքում, որոնց պարագայում կարող է ենթադրել, որ անձը այդ արարքը կատարել է թրաֆիքինգի զոհ լինելու ընթացքում, օրինակ՝ Պետական սահմանը ապօրինի հատելը կամ կեղծ փաստաթղթեր օգտագործելը, այդ պարագայում իրավապահ մարմինները առաջին հերթին պետք է ամեն կերպ պարզեն, թե տվյալ անձը արդյոք հավանական թրաֆիքինգի զոհ է, թե՞ ո՛չ: Եթե պարզվում է, որ ենթադրյալ թրաֆիքինգի զոհ է ՝պետք է անհապաղ միջոցներ ձեռնարկել, որպեսզի ընթանա նույնականացման փուլ և ես առաջարկում եմ, որ դրա ընթացքում այդ անձի նկատմամբ չկիրառվի ազատությունից զրկելու հետ կապված խափանման միջոց:		